



**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԾԱԿՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծակքար համայնք,
ՀՀ Գեղարքունիքի մարզ գ. Ծակքար 2 փող. N16

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2020 թվականի N 19

Ծակքար համայնքի «6-րդ փողոցի ասֆալտապատման» ծրագրին մասնակցելու և ՀՀ պետ. բյուջեից նպատակային հատկացում սուբվենցիա ստանալու թույլտվության մասին (զեկ. Գ. Ավետիսյան -համայնքի ղեկավար) :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2020թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝ համայնքի ավագանին որոշեց.

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Ծակքար համայնքի «6-րդ փողոցի ասֆալտապատման» ձանապարհի կառուցման ծրագիրը:
2. Սուբվենցիայի ստացման համար գործող կարգող կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել Ծակքար համայնքի «6-րդ փողոցի ասֆալտապատման» ձանապարհի կառուցման սոցիալական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:
3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2020 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու համար:

Մեխ. Հակոբյան *Մեխ. Հակոբյան*
 Մ. Ալեքսանյան *Մ. Ալեքսանյան*
 Ա. Խաչատրյան *Ա. Խաչատրյան*
 Զ. Հովհաննիսյան *Զ. Հովհաննիսյան*
 Հ. Այվազյան *Հ. Այվազյան*



Համայնքի ղեկավար

Դեմ-0 Ձեռնպահ-0

ԳՎԻԴՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ